

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ
ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒԲԵՐ ՏԵՐ-ՄԵՐԿԵՐՅԱՆ (Ֆրանսիա)

Վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական հեղաշրջումները, բնականաբար, արտացոլվում են լեզվի զարգացման գործընթացի վրա: Ստեղծվել են նոր, ազատ կապեր Հայերենի երկու տարբերակների՝ արևելահայերեն և արևմտահայերեն Հաղորդակց-վողների միջև: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նրանց միջև կան միջ-լեզվական նոր փոխհարաբերություններ:

Ներկա հոդվածի մեջ մեր հարցազրույցը հետևյալն է՝

- արգի հայերենի երկու տարբերակների միջև լեզվական շփումներ գո-յություն ունե՞ն արդյոք,
- որո՞նք են այդ շփումների տարածքները և ի՞նչ չափի են գրանք,
- որո՞նք են դրանց հետևանքները արգի հայերենի զարգացման գործըն-թացում:

Յուրաքանչյուր տարբերակի կիրառական ոլորտները սահմանելու նսլատակով, նախ ներկայացնենք հանրալեզվաբանական մի կարճ վերլու-ծություն՝ պատասխանելով հետևյալ երեք հարցերին.

- ո՞րն է հաղորդակցվողների քանակն ու լեզվական գիտակության չա-փը,
- որո՞նք են նրանց աշխարհագրական տարածքներն ու սահմանները,
- ո՞րն է լեզվի իրավական կարգավիճակը, նրա հասարակական ֆունկ-ցիան հավաքականության մեջ:

Սկսենք արևմտահայ տարբերակից:

Ինչպես հայտնի է, արդի արևմտահայ տարբերակը սփռված լեզու է, այն կիրարկվում է 50-ից ավելի երկրներում, որոնք կազմում են Սփյուռքը: Այդ տարբերակով հաղորդակցվողների թիվը մոտավոր է, մար-դահամարներում ծագումով Հայ բնակչությունը հաշվի չի առնվում: Այդ երևույթը նկատվում է Հայաշատ բոլոր երկրներում: Հաղորդակցվողների թիվն անկայուն է հատկապես բնակչության տեղաշարժերի հետևանքով: Սակայն բնակչության թվից ավելի կարևոր է այն, թե հայ բնակչության ո՞ր տոկոսն է բավարար չափով տիրապետում լեզվին: Սփյուռքի հայախոս բնակչությունը կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝ ակտիվ և պաս-սիվ հաղորդակցվողների: Ակտիվ հաղորդակցվողները տիրապետում են լեզվին, նրանք կարդում, գրում և խոսում են արևմտահայ տարբերակով առօրյա կյանքում, դա նրանց մայրենի լեզուն է: Ակտիվ հաղորդակցվող-ները ապահովում են լեզվի զարգացման գործընթացը, նրա կենսունա-կությունն ու հաջորդ սերունդներին փոխանցելու կարևոր գործոնը: Նրանց լեզվամտածողությունը կատարվում է Հայերենով: Ակտիվ հաղոր-

դակցվողների քանակը տոկոսային հարաբերությամբ մի լեզվական համայնքից մյուսը տարբեր է, սակայն բոլոր դեպքերում այն փոքրամասնություն է կազմում: Օրինակ, Ֆրանսիայում, որտեղ մոտ 350 հազար հայ է բնակվում, ըստ մեր հաշվումների միայն 10 տոկոսն է ակտիվ հաղորդակցվող, այսինքն միայն 3500 անձ: Մարսել քաղաքում կատարված հետադոտությունները ցույց են տալիս, որ 70000 հազար հայ բնակչության մեջ միայն 700-ն է ակտիվ հաղորդակցվող: Այս թիվը գուցե շատ փոքր թվա, բայց չպետք է չփոթել ակտիվ հաղորդակցվողներին սլասսիվ հաղորդակցվողների հետ:

Պասսիվ հաղորդակցվողները կարգալ-դրել գրեթե չզիտեն, ունեն սահմանափակ բառապաշար, հայերեն հասկանում են, բայց դժվարանում են սահուն խոսել, բարդ նախադասություններ կազմել: Առօրյա կյանքում նրանք հայերենը չեն օգտագործում, այլ միայն պատահական ձևով, առիթից առիթ: Պասսիվ հաղորդակցվողները չեն կարող ունենալ լեզվական ժառանգորդներ, նրանք լեզվական շղթայի վերջին օղակն են կազմում: Սփյուռքի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը կարելի է դասել պասսիվ հաղորդակցվողների շարքին: Նշենք, որ արևմտահայ տարբերակով բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են և նրանց համար առաջին լեզուն ընդունող երկրի լեզուն է, որը ժամանակի ընթացքում իր ազդեցություն է թողնում. դա առաջին հերթին ակնհայտ է հատկապես արտասանության մեջ (չնայած բառապաշարի վրա նույնպես այդ ազդեցությունը շոշափելի է): Այսպես, այսօր դյուրբություն կարելի է զանազանել հունահային ամերիկահայից, ֆրանսահային պոլսահայից, արդենտինահային լիբանանահայից: Հեռու էլ այն ժամանակը, երբ կղանազաններ նաև ֆրանսահայերենը պոլսահայերենից, ամերիկահայերենը հունահայերենից, լիբանանահայերենը իսպանահայերենից:

Իրականում, արևմտահայերեն ակտիվ հաղորդակցվողները հայապահպանման համար գոյապայքարի մեջ Սփյուռքի ամենագործոն տարրն են կազմում: Ակտիվ տարրը փոքրաթիվ է, բայց շատ ավելի գործուն, ու այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե նրանց թիվը մեծ է: Այսօր, Սփյուռքի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը պատկանում է պասսիվ հաղորդակցվողների խմբին, որը համընդհանուր կարծիքով տարեցտարի գնալով մեծանում է:

Ինչպես հայտնի է, արևմտահայ տարբերակը կիրարկվում է մի քանի տասնյակ երկրներում կազմված լեզվական համայնքներում, այն չունի հողատարածքային լեզվական միատարրություն: Յուրաքանչյուր լեզվական համայնք, ըստ ընդունող երկրի սահմանադրության թույլ տված հնարավորությունների կամ իրավունքների, մյուսներից տարբեր կազմակերպչական ենթակառուցյուններ ունի քաղաքական, մշակութային, տնտեսական, ուսումնական մարզերի մեջ: Սակայն չնայած այս տարբերություններին, նրանց մեջ կարելի է որոշ ընդհանրություններ նշել.

- լեզվական ոչ մի համայնքի մեջ արևմտահայ տարբերակը պետական լեզու չէ, հետևաբար այն վարչական լեզու չէ, այն չի օգտագործվում որպես գիտական, բժշկական, դատական, իրավական լեզու: Այն չունի համընդհանուր մամուլ, հեռուստատեսություն, չունի ուսումնական,

Համալսարանական համակարգ, ամենուր այն փոքրամասնությունների լեզու է և չունի ընդունող երկրի պետական հովանավորությունը: Արևմտահայ տարբերակը չունի հասարակական բնույթ. նրա կիրարկումը ոչ մի տեղ պարտագիր բնույթ չի կրում:

Այս բոլորն ի նկատի ունենալով, տեսնենք, թե, ի վերջո, որոնք են արևմտահայ տարբերակի ամենօրյա, կանոնավոր կիրառական տարածքները: Եվ քանի որ այս տարբերակը չունի համընդհանուր հասարակական բնույթ, ապա նրա կիրարկման ոլորտները կգատորոշենք ըստ գործառական ցանցերի:

- Լեզվական գործառական առաջին ցանցը ընտանեկան ցանցն է, ընկերական, բարեկամական միջավայրը: Լեզվական ֆունկցիան, այս դեպքում, միայն պարզ հաղորդակցությունն է, սահմանափակ բառապաշարով, այն չունի գրական կամ մասնագիտական որևէ բնույթ: Պետք է ասել, որ գրեթե բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են և հեշտությամբ են օգտագործում փոխառյալ բառեր կամ դարձվածքներ: Բացի այդ, նշենք, որ այդ կարևոր լեզվական ցանցը նահանջ է ապրում, հայաստան ընտանիքները աստիճանաբար պակասում են բոլոր լեզվական համայնքներում, հատկապես խառն ամուսնությունների հետևանքով:
- Երկրորդ կարևոր լեզվական ցանցը ուսումնական, դպրոցական միջավայրն է, որտեղ սկզբունքորեն բոլորը պետք է հայերեն խոսեն: Այսուհանդերձ նշենք, որ Սփյուռքի բոլոր դպրոցներում դասընթացներն ընթանում են երկու լեզվով, և աշակերտները դասամիջոցներին հաճախ խոսում են օտար լեզվով:
- Մեկ այլ կարևոր լեզվական ցանց է մշակութային, հայրենակցական, կուսակցական կազմակերպությունների, միությունների, ընկերակցությունների, սպորտային ակումբների միջավայրը: Այսուհանդերձ, մեր ուսումնասիրությունները, դիտողությունները և հարցազրույցները այդ կազմակերպությունների պատասխանատուների հետ ցույց են տալիս, որ Ֆրանսիայում (և մի շարք այլ լեզվական համայնքներում) նրանց աշխատանքային լեզուն ժողովների, հավաքույթների ընթացքում կիրարկվող լեզուն, ֆրանսերենն է:
- Շատ կարևոր լեզվական հաղորդակցական ցանց է եկեղեցին, եկեղեցական բոլոր արարողությունները, հոգևոր կյանքի հետ կապված բոլոր միջոցառումները կատարվում են հայերենով: Նշենք, որ այս լեզվական ցանցի մեջ հաղորդակցվողների մեծամասնությունը կազմված է տարեց մարդկանցից:
- Գրական, գեղարվեստական, թատերական երեկոների ընթացքում կիրարկվում է հայերենը, սակայն դասախոսությունները մեծ մասամբ կարդացվում են օտար լեզվով:
- Որպես գրավոր լեզու, արևմտահայ տարբերակը մամուլի լեզու է: Օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր են լույս տեսնում, որոնք, սակայն, հաճախ երկլեզվանի են. միայն հայերենով լույս տեսնող մամուլը չափազանց քիչ է թե՛ թվով, թե՛ տպաքանակով, թե՛ ընթերցողների քանակով:

- Այն գրական, գեղարվեստական ստեղծագործությունների լեզու է. չափազանց սահմանափակ տպաքանակով ու մանավանդ ընթերցողների խիստ պակասող քանակով:

Արանով են սահմանափակվում արեմտաՀայ տարրերակի կիրառական ոլորտները: Ինչպես տեսնում ենք, դրանք բավական նեղ են. նրա դրաված տարածքները բավական սահմանափակ: Բավական է դուրս գալ լեզվական գանգի այդ նեղ սահմաններից, որպեսզի Հաղորդակցվողը ընկնի մեկ ուրիշ, լեզվական ավելի Համատարած ցանցի մեջ: Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ լեզվի բնականոն զարգացման Համար անհրաժեշտ պայմանները, նախադրյալները բացակա են այս տարրերակի Համար: Սփյուռքում այս իրողությունը գիտակցում են և դրա վառ ապացույցն է մամուլի մեջ անընդհատ Հնչող ահագանդերը:

Արևելահայ տարրերակի վրա երկար կանգ չենք առնի. բոլորին Հայտնի է, որ այն Հայաստանի Հանրապետության պետական լեզվի կարգափոխումից ունի, պետական Հովանավորություն, դոլարություն ունի լեզվական քաղաքականության ծրագիր ու օգտագործվում է Հանրապետության սահմաններում: Արևելյան Սփյուռքի վրա (Պարսկաստան, Վրաստան, Խուսաստան) կանգ չենք առնի ներկա Հոգվածի սահմաններում:

Թերևս այսօր դժվար է արևելահայերեն Հաղորդակցվողների ճիշտ թիվն ունենալ բնակչության տեղաշարժերի պատճառով, սակայն բոլոր Հաղորդակցվողները ակտիվ խմբի մեջ են մտնում, դա նրանց մայրենի լեզուն է, և լեզուն ունի իր զարգացման Համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները կիրառական բոլոր ոլորտները, այն դրավում է Հասարակական գործառույթի բոլոր տարածքները: Լեզվի Հարատևությունը, նոր սերունդներին փոխանցումը տարակույս չի Հարուցում:

Ի նկատի առնելով երկու տարբերակների կիրառական տարածքների մեջ եղած տարբերությունները, այժմ տեսնենք, թե ինչպե՞ս և որտե՞ղ է կատարվում երկու տարբերակների միջլեզվական շփումը, ի՞նչ բնույթ և ուղղվածություն ունի այն:

«Լեզուները շփման մեջ» իր Հայտնի աշխատությունում Ուրիել Վալերախտը միջլեզվական շփումը սահմանում է այսպես. երկու լեզուներ մտնում են շփման մեջ, երբ միևնույն երկլեզվանի անձը խոսում է տվյալ երկու լեզուներով և այդ դեպքում տեղի է ունենում լեզվական փոխներթափանցում: Որքան մեծ է շփվող լեզուների միջև եղած տարբերությունը, նույնքան մեծ կարող է լինել միջլեզվական փոխներգործությունը, նշում է նա:

Հայերենի դեպքում միջլեզվական շփումը այլ բնույթ է կրում: Այն եղակի է այն իմաստով, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե երկու օտար լեզուներով խոսող երկլեզվանի Հաղորդակցվողին, այլ միևնույն լեզվի երկու տարբերակներով Հաղորդակցվող երկու տարբեր անձերի:

Հետևաբար, լեզվական շփում ասելով նկատի ունենք երկու տարբերակներ. Հաղորդակցվողների Հանդիպումը, որը կարող է տեղի ունենալ կամ արևելահայերենի կիրառման տարածքների սահմաններում, կամ էլ արևմտահայերենի կիրառման ոլորտներում:

Ի՞նչ չափով է արևմտահայ տարբերակը առկա արևելահայ տարբերակի կիրառման ոլորտներում: Սփյուռքից Հայաստան ժամանող զանազան կազմակերպությունների, միությունների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, պատգամավորների, գործարար մարզկանց այցելությունների, պաշտոնական կամ ոչ պաշտոնական այցերի ընթացքում կատարվում է երկու տարբերակներով հաղորդակցվողների չափում, չնայած այդ այցելությունների մեծամասնությունը պասսիվ հաղորդակցվողների խմբին է պատկանում:

Զբոսաշրջիկներին այցելությունները նույնպես լեզվական չափան կարևոր առիթ են: Գրավոր խոսքի մեջ արևմտահայ տարբերակի ներկայությունն աննկատ է, մամուլի մեջ 1-2 հոդված, հաղվագեպ հարցազրույցներ, տարին միայն 1 կամ 2 գիրք է լույս տեսնում արևմտահայ տարբերակով: Արևելահայերենով հաղորդակցվողների մեծամասնությունը չունի տեղական հանդիպումներ, չափումներ արևմտահայ հաղորդակցվողների հետ:

Այժմ քննենք հակառակ երևույթը՝ արևելահայ տարբերակի ներկայությունը արևմտահայ տարբերակի կիրառական շրջանակներում Սփյուռքի հայահոծ կենտրոններում:

Խմրային պաշտոնական կամ ոչ պաշտոնական այցերը, քաղաքական, մշակութային գործիչների, գործարար մարզկանց այցելությունները լեզվական չափան առիթներ են: Դեսպանությունների ներկայությունը հայաչափ կենտրոններում, որոնց օգտագործած լեզուն արևելահայերենն է, դեսպանատների տված ծանուցումները, հաղորդագրությունները արևմտահայ հաղորդակցվողը մամուլի մեջ կարգում է արևելահայ տարբերակով:

Համերգներ, բանաստեղծական երեկոներ, հանդիպումներ, գեղարվեստական երեկոներ, որոնց ընթացքում ելույթ են ունենում արևելահայ արտիստներ կամ արևմտահայ կատարողների մեծ մասը երգում կամ արտասանում է արևելահայերենով գրված ստեղծագործություններ: Ցուցադրվող բոլոր կինոնկարները, պարզ է, արևելահայ տարբերակով են:

Մեկ այլ կարևոր գործոն՝ մեկ տարի է ինչ Հայաստանի ազգային հեռուստատեսային հաղորդումները հեռարձակվում են ամբողջ Սփյուռքում և հազարավոր ընտանիքներ ամեն օր դիտում ու լսում են հաղորդումներ արևելահայերենով:

Սա ևս արևմտահայ լեզվական ցանցի սեյ արևելահայօրօսը ներկայության կարևոր գործոն է: Հեռուստադիտողների շրջանում կատարված հարցախոյզները ցույց են տալիս, որ նույնիսկ ակտիվ հաղորդակցվողների զգալի մասը դժվարանում է լրիվ հասկանալ օգտագործված լեզուն, հատկապես բառապաշարի ու խոսողի արագության պատճառով:

Արևելահայերենի տարածման, լեզվական ճառագայթման մեջ հսկայական նշանակություն ունի արտագաղթողների մեծ թիվը, հատկապես ԱՄՆ-ում, որտեղ կարելի է ավելի հաճախ արևելահայերեն լսել, քան արևմտահայերեն: Կան ամենօրյա դպրոցներ, որտեղ արևելահայերեն է դասավանդվում: Այս դեպքում, արևելահայ ակտիվ հաղորդակցվողների

ազդեցությունը պասսիվ արևմտահայերեն հաղորդակցվողների վրա զգալի է:

Գրավոր խոսքը նույնպես հաճախակի ներկա է արևմտահայ մամուլի մեջ. սփյուռքահայ մամուլի մեջ կանոնավորապես արտատպվում են արևելահայ մամուլից քաղված մեծ քանակությամբ հոդվածներ, հարցազրույցներ:

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ արևելահայ տարբերակի ներկայությունը արևմտահայերենին յուրահատուկ կիրառական շրջանակների մեջ շատ ավելի մեծ է, արևմտահայ ակտիվ հաղորդակցվողը անխուսափելիորեն կարգում ու լսում է արևելահայ տարբերակը շատ ավելի հաճախ, քան հակառակը: Եվ այս երևույթը շատ ավելի տեսական, նշանակալից բնույթ ունի:

Բանավոր խոսքից քաղված մեր ուսումնասիրությունները, հավաքած օրինակները ցույց են տալիս, որ արևելահայ տարբերակը ավելի մեծ ներկայություն է ցուցաբերում արևմտահայ տարբերակի կիրառական տարածքներում և հետևաբար ավելի մեծ ազդեցություն ունի արևմտահայ տարբերակի վրա, քան հակառակը: Արևմտահայ տարբերակով հաղորդակցվողների բանավոր խոսքի մեջ երևան են դալիս արևելահայերենին բնորոշ բառեր, դարձվածքներ, արտահայտություններ: Օրինակ արևմտահայ հաղորդակցվողները օգտագործում են. պարզ ասած փոխանակ հստակ ըսելու, թվում է՝ փոխանակ կը թվի, ճիշտ է փոխանակ շիտակ է, իհարկե փոխանակ անշուշտ, մի բոպե փոխանակ մի վայրկյան, հեռախոսել՝ փոխանակ հեռաձայնել:

Երկխոսության ընթացքում արևմտահայերենով հաղորդակցվողը սահմանականի ներկայում բայը խոնարհում է արևելահայ ձևով՝ կարողանում է փոխանակ կրնա, ուզում է փոխանակ կուզե, կարծում եմ փոխանակ կը կարծեմ:

Երկու տարբերակներով հաղորդակցվողների հանդիպման ժամանակ, երբ տեղի է ունենում լեզվական շփում, յուրաքանչյուր հաղորդակցվող փորձում է ընդօրինակել խոսակցին, կարծես խոսակցությանը ավելի մտերմիկ բնույթ տալու համար. արևելահայն ասում է. աղվոր է փոխանակ լավ է կամ գեղեցիկ է, կրնամ փոխանակ կարող եմ, աղեկ է փոխանակ լավ է, կուզեմ փոխանակ ուզում եմ:

Հայաստանի հեռուստատեսությամբ հեռարձակվող հարցազրույցի ընթացքում արևմտահայերեն ակտիվ հաղորդակցվողը արևելահայ հաղորդավարի հետ ունեցած զրույցի ժամանակ բայը խոնարհում է ում-ով (ասում է, ուզում եմ...), բայց երբ ինքը հարցերին չի պատասխանում, ապա խոսում է զուտ արևմտահայերենով, իսկ հաղորդավարը չի փոխում իր արևելահայ տարբերակը:

Երկար տարիներ Ֆրանսիայում ծառայած արևելահայ վարդապետն իր քարոզը կարգում է ինքնատիպ լեզվով՝ խառնելով արևելահայ և արևմտահայ տարբերակները:

Կարծում ենք, որ այս բոլոր օրինակները անհատների բանավոր խոսքին, այսպես ասած, մերձավոր խոսակցական լեզվին են վերաբերում, նրանք չեն թափանցում գրավոր խոսքի մեջ: Այդ հանդիպումները լեզվա-

կան առումով նշանակալից բնույթ չունեն, դրանք կարճատև են, վերաբերում են բնակչության փոքր տոկոսին ու անկանոն են: Յուրաքանչյուր տարբերակի բառապաշարի զարգացման վրա ազդելու շոշափելի, ակներև փոխազդեցություն չենք գրանցում: Բառապաշարի զարգացումը հավաքական գործ է, և անհատական երևույթները նշանակալից բնույթ չունեն: Այսպես, արևելահայերենի կիրառական շրջանակները շատ ավելի ընդարձակ են, քան արևմտահայերենինը: Այս իսկ պատճառով, իր հասարակական լիակատար ֆունկցիայով, կիրառական չափագանց լայն տարածքով, արևելահայ տարբերակը շատ ավելի ակտիվ, գործուն տարբերակ է: